ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ՄՈՎՍԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(2 դեկտեմբերի 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ հավատացյալներ, այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է մեր ազգի առաջին լուսավորիչներ եւ մեր Եկեղեցու հիմնադիրներ Սբ. Թադեոս եւ Սբ. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Հոգեգալստյան օրը Վերնատան մեջ մյուս աշակերտների հետ նրանք եւս «լցվեցին Սուրբ Հոգով» (Գործք. Բ. 4) ու «սկսեցին բոլոր հեթանոսների լեզուներով պատմել «Աստծու մեծագործությունների մասին» (Գործք. Բ. 11):

Հին Ուխտի ժամանակ Աստծու պատգամախոսները մարգարեներն էին, իսկ Նոր Ուխտի ժամանակ Տիրոջ Ավետարանի քարոզիչները դարձան առաքյալներ: Մեր Տեր Հիսուս Քրիստոս երկինք համբարձվելուց առաջ նրանց պատվիրեց գնալ եւ քարոզել Ավետարանը բոլոր ազգերին ու նրանց մկրտել Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անունով (Մատթ. ԻՀ. 19, Մարկ. ԺԶ. 15): Տիրավանդ այս պատգամին հնազանդ՝ առաքյալները սփռվեցին աշխարհով մեկ՝ բոլոր ազգերին լուսավորելու Քրիստոսի Ավետարանի լույսով:

Սբ. Թադեոս ու Սբ. Բարդուղիմեոս առաքյալները Տիրոջ այս լուսավոր պատգամն իրականություն դարձրին Հայաստանում, ուր եւ նահատակվեցին Սանատրուկ թագավորի հրամանով՝ դառնալով Հայոց Եկեղեցու հիմնադիրները եւ հայ ազգի հավերժ բարեխոսները: Նրանց քարոզչության ու նահատակության համար էլ Հայ Եկեղեցին համարվում է առաքելական եւ կոչվում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Սբ. Թադեոս եւ Սբ. Բարդուղիմեոս առաքյալների քարոզության շնորհիվ հայ ժողովուրդը լուսավորվեց Քրիստոսի լույսով, այնուհետեւ Սբ.

Գրիգոր Լուսավորչի ու Սբ. Տրդատ արքայի ջանքերով քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց, ապա սուրբ թարգմանիչ վարդապետների շնորհիվ այն ազգային դիմագիծ ստացավ։

Սիրելի՛ հավատացյալներ, մեր պատմության այն շրջաններում, երբ հայ ազգը շեղվել է առաքյալների քարոզած այս հավատքից, հեռացել է նրանց հիմնած Առաքելական Սուրբ Եկեղեցու ավանդներից, դադարել է լսել իր հոգեւոր առաջնորդներին, ընկել է ծանր փորձությունների մեջ։ Ժամանակ առ ժամանակ որոշ շրջանակներ տարածում են այն թեզը, թե հայ ազգը թուլացավ, երբ քրիստոնյա դարձավ։ Սակայն իրականում ճիշտ հակառակն է. հայ ժողովուրդն օրհասական կորուստներ ունեցավ ոչ թե քրիստոնյա լինելու, այլ քրիստոնյա չլինելու պատճառով։ Մեր դժբախտությունների պատճառ եղել են Մայր Եկեղեցուց հեռանալը եւ առաքյալների քարոզած մաքուր հավատի ու քրիստոնեության պակասը։

Սուրբ Գրքում հստակորեն ասվում է. եթե չպահեք Աստծու օրենքները, ապա բոլոր ազգերից վերջինը կլինեք, դուք կցանեք, իսկ արդյունքը կուտեն ուրիշները, պատերազմների մեջ կընկնեք, ձեր զավակները գերի կլինեն, կսփռվեք աշխարհով մեկ (տե՛ս Ղեւտ. ԻԶ. 14–33)։ Այնինչ՝ եթե պահպանեք Աստծու պատվիրանները, ապա կհաջողեք ու կզորանաք, հալածական կանեք ձեր թշնամիներին, եւ Տերը ձեր երկրին խաղաղություն կպարգեւի (տե՛ս Ղեւտ. ԻԶ. 3–8)։

Ուստի այս օրը մեզ համար առաքելական ճշմարիտ հավատի վերանորոգության հրավեր է։ Առաքյալների տոնը մեր սերն ու հավատարմությունը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու նրա գահակալի նկատմամբ վերահաստատելու եւ մեր հայրերի ու վարդապետների թողած ժառանգությանն ու բարոյական արժեքներին հավատարիմ մնալու ուխտի օր է։

Սիրելի՛ հավատացյալներ, ըստ ավանդության՝ Թադեոս առաքյալն իր հետ Հայաստան բերեց Սբ. Գեղարդը, որով հռոմեացի զինվորը խաչի վրա խոցեց Տեր Հիսուսի կողը (Հովհ. ԺԹ. 34), ինչպես նաեւ մի բաժին այն յուղից, որ Տեր Հիսուս փոխանցել էր առաքյալներին, իսկ Բարդուղիմեոս առաքյալն իր հետ Հայաստան բերեց Տիրամոր պատկերը։

Առաքյալների հիշատակի օրը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական սրբատառ կոնդակով դեռեւս 2014 թվականին հռչակվել է Աստվածամուխ Սուրբ Գեղարդի ուխտի օր, եւ հնարավորություն է ըն-

ձեռվել, որ հավատացյալները գան ու երկրպագեն Սուրբ Գեղարդին՝ «ի մխիթարություն իրենց հուսացյալ հոգիների եւ ի կատարումն սրտի բաղձանքների»։

Սիրելի՛ հավատացյալներ, այս գեղեցիկ առիթով շնորհավորում եմ ամենքիս ու աղոթքով հայցում Սբ. Թադեոսի եւ Սբ. Բարդուղիմեոսի բարեխոսությունը մեր ազգի համար, որպեսզի Աստված առաքելական հավատքի մեջ զորացնի ու պահպանի մեզ, իսկ այսօր դուրս բերված աստվածամուխ Սբ. Գեղարդը շարունակի հրաշագործել մեր կյանքում՝ ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ի շինություն մեր հայրենիքի. ամեն։